ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՇՈՒՐՋ
/ԸՍՏ 1917Թ. ՏՎՅԱԼՆԵՐԻ/

ԱԼԻԿ ՂԱՐԻԲՅԱՆ
ԵՊՀ Հայոց պատմության ամբիոն

Պատմական, ռազմավարական, ազգագրական տեսակետից Ղարաբաղը կազմել է Հայաստանի տարածքի անբաժան մասը՝ մտնելով Արցախ նահանգի մեջ: Այն Մեծ Հայքի 15 նահանգներից առանձնանում էր և կոչվում էր "Ամուր"[1]: Իր բարձրադիրությամբ, անառիկությամբ Ղարաբաղը ընդգրկում է նահանգի կամ նաև Առան անունով հայտնի Արցախի միջնամասը՝ Սյունիքից մինչև Կուր և բազում քաղաքական խառնաշփոթ իրավիճակներից հետո մնացել էր հայկական: Ըստ Ղևոնդ Ալիշանի, Ղարաբաղն իր այդ անունը ստացել է խիտ անտառների, այգիների և նրանց ստվերների պատճառով:

Արցախը հնուց ի վեր բնակեցված է եղել հայերով: Ղարաբաղի հայ բնակչությունը հայտնի է իր ազգասիրությամբ և հայրենիքին նվիրվածությամբ: Ղարաբաղի հայ բնակչության առավելություններից մեկն այն է, որ նա գերծ է մնացել ձուլումից և հազվադեպ է արտագաղթել իր բնօրրանից: Արցախի հայ բնակչությունն ունեցել է նստակյաց կյանքին բնորոշ կենսակերպ:

XVIII-րդ դարի կեսերից Ղարաբաղի հյուսիսային սահմաններն են ներթափանցում թյուրքական քոչվոր ցեղերը: Այդուհանդերձ, Արցախի մելիքությունները երկար ժամանակ կարողացել են պահպանել իրենց ինքնուրույնությունը:

Արցախի /Լեռնային Ղարաբաղ/ պատկանելիության վերաբերյալ վեճերը ծագեցին 1918թ., երբ Անդրկովկասում պատմական որևէ նախահենք չունեցող Ադրբեջանի Հանրապետությունն իր կազմավորման պահից հանդես եկավ տարածքային հավակնություններով՝ ձգտելով գրավել հայաբնակ Արցախը, Զանգեզուրը և Նախիջևանը: Չկա ուշադրության արժանի մի որևէ տեղեկություն, որը չվկայի Արցախի բնակչության մեծամասնության հայ լինելու փաստը:

1828թ. Թուրքմենչայի պայմանագրով Արցախի պատմական տարածքը անցավ Ռուսաստանի տիրապետության տակ, 1868թ. – ից այն մտավ նոր կազմավորված Ելիզավետպոլի նահանգի մեջ: Ղարաբաղի բնակչության ազգային կազմի մասին հավաստի տեղեկություններ կարող ենք քաղել ցարական Ռուսաստանի վիճակագրությունից, ըստ որի 1917 թվականի դրությամբ, Շուշի քաղաքի 43 869 բնակչներից 23 396 – ը հայեր էին, 1.249–ը՝ ռուսներ, 35-ը՝ եվրոպացիներ, 36-ը՝ վրացիներ, 25-ը՝ լեռնականներ, իսկ 19.121–ը՝ մահմեդականներ, այսինքն՝ բնակչության մեծամասնությունը /53.33%/ հայեր էին[2]:

Անդրկովկասի հայ բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան բրիտանական արխիվներում: Համաձայն այդ տվյալների, անկախություն ձեռք բերելուց հետո Ադրբեջանը ներկայացնող պատվիրակությունները զանազան մակարդակների բանակցություններում հաճախ կեղծում էին հայ բնակչությանը վերաբերող թվերը: Օրինակ, Անդրկովկասում բնակվող հայերի թիվը անգլիական տվյալներով 1917 թվականին կազմում էր 1 809.605 է, մինչդեռ, ադրբեջանական կողմի կեղծված տվյալները նշում են ընդհամենը՝ 344.101[3]:

Համաձայն նույն 1917թ. տվյալների, Հայաստանի Հանրապետության 67.350 քառ. կմ տարածքի հայ բնակչության թվաքանակը՝ 1.294.792 մարդ էր, որը կազմում էր ՀՀ բնակչության 60%-ը: Հայերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ՝

1. Կարսի մարզ 15.000 քառ. կմ 122.056 մարդ
2. Ախալքալակ 2.550 քառ. կմ 82.775 մարդ
3. Բորչալու /մի մասը/ 5.200 քառ. կմ 64.000 մարդ
4. Ղազախ /մի մասը/ 3.400 քառ. կմ 61.000 մարդ
5. Ելիզավետպոլ /մի մասը/ 4.000 քառ. կմ 52.000 մարդ
6. Զևանշիր /մի մասը/ 3.700 քառ. կմ 22.000 մարդ
7. Շուշի /մի մասը/ 2.300 քառ. կմ 98.000 մարդ
8. Կարյագինո /մի մասը/ 450 քառ. կմ 22.000 մարդ
9. Զանգեզուր /մի մասը/ 6.000 քառ. կմ 100.000 մարդ
10. Երևան 24.750 քառ. կմ 669.871 մարդ[4]:

Պատմա-աշխարհագրական և էթնիկ առումներով Արցախը 1917թ. մի ամբողջություն էր՝ իր մեջ ընդգրկելով մոտ 13 850 քառ. կմ տարածք՝ Ղազախի, Ելիզավետպոլի, Շուշու, Զևանշիրի, Կարյագինոյի գավառների մի մասով և 255.000 հայ բնակչությամբ: Հայերը փաստորեն կազմել են բնակչության 75.46%-ը: Այս տարածքում բնակվել են նաև 72.500 մահմեդականներ[5]: Նույն թվականին վերաբերող "Кавказский Календарь"-ում տպագրված տվյալները հայերի թիվը ներկայացնում են՝.

1. Ղազախում 61.000
2. Ելիզավետպոլում 52.000
3. Զևանշիրում 22.000
4. Շուշիում 98.000
5. Կարյագինոյում 22.000[6]:

Ադրբեջանցի կեղծարարների ախորժակը չէր բավարարվում միայն Արցախի բնակչության թվաքանակը կեղծելով, այլ տարածվում էր Հայաստանի մյուս շրջանների՝ մասնավորապես Զանգեզուրի, Երևանի նահանգի, Ելիզավետպոլի նահանգի Նուխի, Արեշ, Շամախ բնակավայրերում ապրող հայերի թվաքանակի վրա:

Անհրաժեշտ է նշել, որ աղբյուրներում Ղարաբաղի հայ բնակչության մասին բերվող տվյալները հաճախ տարբերվում են իրարից՝ կազմելով 150 մինչև 182 հազար[7]:

Ցարական Ռուսաստանի վիճակագրության մեջ Ղարաբաղին վերաբերող տվյալները հաճախ չեն ներառել Արցախի մի շարք պատմական մասեր (Գյուլիստան, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ, Դիզակ), այդ իսկ պատճառով հստակ պատկերացում երկրամասի ամբողջ բնակչության մասին դժվար է կազմել, օրինակ՝ 1910թ. տվյալներով միայն Շուշիում և Ջևանշիր-Կարյագինոյի մի մասում բնակվում էին 150.000 հայեր:

Արցախի հայ բնակչության մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակում Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի տվյալները:

1914թ. դրությամբ Ղարաբաղի Հայոց Թեմը իր մեջ ընդգրկում էր 206 768 լուսավորչական հայեր[8]:

Մեր կարծիքով, Արցախի հայ բնակչության մասին քիչ թե շատ հավաստի տեղեկություններ են պարունակում Թիֆլիսում գտնվող անգլիական զորքերի նարկայացչությանը տրամադրված հայկական տվյալները, որոնք վերաբերում են 1917թվականին: Ստորև ներկայացնում ենք դրանք ըստ բնակավայրերի:[9]

Քաղաքների և գյուղերի անունը	ընտ. թ.	տղմ.	կին	ընդ.
քաղաք Շուշի	3000	10.779	10.372	21151
Վարանդա				
1 .Շուշիքենդ	360	1507	1281	2788
2. Մխիթարքենդ	46	243	17	1414
3. Գյունոտ	36	182	176	358
4. Սղնախ	60	324	281	605
5. Քարինտակ	165	718	578	1296
6. Ելիշա	70	336	244	580
7. Գնշան	142	510	412	922
8. Գնդալա	151	762	600	1362
9. Նորշեն	145	578	450	1028
10. Հացի	69	391	342	733
11. Ավդուր	73	303	267	570
12. Մուրիշեն	58	352	279	631
13. Դագրազ	69	317	307	624
14. Աղբուլաղ	71	257	205	462
15. Վարազաբույն	174	678	602	1280
16. Փիրջամալ	180	674	606	1280
17. Նախիջանիկ	185	732	648	1380
18. Կաթուկ	82	370	287	657
19. Գյունեյ – Զերտազ	400	1334	1160	2494
20. Գյուզեյ- Զերտազ	200	688	411	1099

21. Խնուշինակ	120	592	499	1091
22. Գիշի	240	842	710	1552
23. Մշկապատ	160	764	597	1361
24. Քենդխուրդ	160	740	557	1297
25. Սպիտակ Շեն	80	310	215	525
26. Նինգի	210	763	599	1352
27. Կագարզա	180	588	483	1071
28. Պառավաթումբ	84	202	167	369
29. Սուս	122	530	456	986
30. Կերտ	118	611	415	1026
31. Քարահունջ	37	130	111	241
32. Մաշադիշեն	186	541	540	1081
33. Գավական	69	291	193	484
34. Մսմնա	53	220	247	467
35. Հերհեր	87	410	332	741
36. Ջավադիղ	70	471	266	737
37. Խերխան	58	402	274	676
38. Սխտորաշեն	78	434	272	706
39. Բիլբիլակ	16	80	50	130
40. Մավաս	37	135	88	223
41. Սարուշեն	67	569	426	995
42. Միխեր	49	266	198	464
43. Թաղավերտ	202	1013	862	1875
44. Թաղավերտ Վերին	111	336	235	571
45. Սարգսաշեն	75	423	340	763
46. Մոշխմատ	41	152	105	257
47. Կարաբուլախ	58	328	248	576
48. Տուիմակա	5	74	60	134
49. Ալամանց	39	163	135	298
50. Ջաղացմեր	60	203	153	356
51. Ավետարանոց	271	1023	905	1928
52. Խաչմաչ	60	355	302	657
53. Վերին Սիգնեկ	46	239	274	513
54. Ներքին Սիգնեկ	94	410	398	808
55. Դոնավարդ	148	804	647	1451
56. Կարասնի	67	292	277	569
57. Դաշուշեն	30	296	299	595
58. Գորով	75	300	237	537
Դիզակ				
59. Հեդրութ	407	1287	1140	2427
60. Թաղասիր	190	625	555	1180
61. Վարդանաշատ	100	400	280	680
62. Կեմրաքուչ	96	529	395	924
63. Վանք	60	175	152	327

64. Տակ	64	211	192	403
65. Նորաշենք	36	143	127	270
66. Կումիլյար	24	82	66	148
67. Մելիքջանյու	36	166	139	305
68. Բոչքեկ	40	137	197	334
69. Բլենտանց	39	202	143	345
70. Խիրմանջուկ	72	200	187	387
71. Աղբուլաղ	62	161	174	335
72. Ախենցիկ	48	193	150	343
73. Իդիլեցիկ	96	408	316	724
74. Դուդկչի	52	212	159	371
75. Բակազուր	261	1118	891	2009
76. Առաքյուլ	191	645	506	1151
77. Ջիլան	64	238	230	468
78. Բինկյաթու	45	228	165	393
79. Ջեբրայիլ	12	60	46	106
80. Դոլանլար	105	762	777	1539
81. Հին Թաղ	66	390	223	613
82. Խծաբերդ	67	339	266	605
83. Մյուլքադարա	49	199	223	422
84. Բարագլուխ	39	256	307	563
85. Խանձաձոր	62	406	226	632
86. Ջամձոր	121	559	546	1105
87. Ծոր	142	550	554	1114
88. Շաղախ	91	554	559	1113
89. Տուղ	270	1050	944	1994
90. Դումի	138	831	851	1682
91. Մոխրինենս	41	155	223	378
92. Թաղոտ	74	297	206	503
93. Ակակու	28	247	190	437
94. Ծակորի	26	232	153	385
95. Մամնդավուր	54	230	178	408
96. Ջիրակուզ	49	363	272	635
97. Բողեր	60	196	181	377
98. Ազախ	170	610	558	1165
99. Դրախտիկ	59	274	190	434
100. Թաղ	450	1441	1133	2574

Խաչեն

101. Կրկժան	80	224	360	584
102. Ղայբալի	79	238	210	448
103. Խանքենդ	50	353	256	619
104. Փախյուլ	18	81	64	154
105. Խնածախ	86	339	281	620
106. Բալուջա	270	689	577	1266

107. Մեխտիշեն	65	294	246	640
108. Կայաբաշի	230	713	523	1236
109. Պտրեցիկ	240	745	744	1489
110. Հանցկ	55	389	280	669
111. Դաշբուլաղ	230	783	703	1486
112. Կարակաթուկ	45	265	157	422
113. Խինձիրիստան	125	531	437	968
114. Սեյդիշեն	70	302	249	551
115. Ուլուբաբ	24	106	84	190
116. Ռեվ	76	238	210	448
117. Ղշլակ	220	513	418	931
118. Սարդարաշեն	55	315	263	578
119. Նորագյուղ	110	503	406	909
120. Ղլիդբաղ	100	415	326	741
121. Խանաբադ	140	599	474	1073
122. Բարագլուխ	100	372	304	676
123. Ղազանչի	66	239	197	436
124. Խարամուրտ	70	377	318	695
125. Առաջաձոր	478	2000	1215	3215
126. Գանձասար	200	1025	810	1835
127. Կելատակ	72	384	361	745
128. Ծմկահող	65	230	210	440
129. Վաղահաս	56	285	228	513
130. Կչողուտ	56	299	270	569
131. Կիչան	45	160	122	282
132. Հայաղ	40	172	142	314
133. Հաթերք	130	315	289	604
134. Ջատառուսաջենգ	60	218	164	382
135. Թմյոու	67	266	230	496
136. Շախմասուր	28	130	112	242
137. Հարությունի Գոմեր	30	102	94	196
138. Դրմբոն	12	68	40	108

Ջրաբերդ

139. Ջանյաթաղ	153	655	507	1162
140. Գյուլաթաղ	123	348	356	704
141. Կուսապատ	147	696	480	1176
142. Հորաթաղ	110	512	372	884
143. Դալիրլու	16	65	52	117
144. Մարդակերտ	274	1044	872	1916
145. Մեղրաթաղ	118	662	551	1213
146. Մեծշեն	124	541	461	1002
147. Մաղավուզ	95	495	420	915
148. Վարունգատեղ	54	261	230	491
149. Տոնինշեն	51	280	199	479

150. Դաստակերտ	16	72	43	115
151. Մարգուշավան	68	250	211	461
152. Մարաղա	118	710	478	1188
153. Սեյսուլան	56	259	232	491
154. Մադաղիս	28	125	97	222
155. Վերին Չայլու	77	404	283	687
156. Ներքին Չայլու	52	179	144	323
157. Թալիշ	190	882	745	1627
158. Հասանկայա	78	284	287	571
159. Կաղվիլար	20	136	98	234
160. Սարավ	227	940	823	1763
161. Մարալյան Սարավ	57	207	187	394
162. Յարմուջա	12	63	46	109
Ելիզավետպոլի գավառ				
163. Մանումնիկ	80	437	357	794
164. Կարաչինար	196	648	523	1171
165. Ներքին Շեն	210	842	690	1532
166. Վերին Շեն	240	918	660	1578
167. Նորշեն	92	299	281	580
168. Խրխափոր	52	143	132	275
169. Բարիս	120	497	322	819
170. Ղարաբուլաղ	80	387	269	656
171. Գյուլստան	67	399	372	771
172. Բաշլուխ	31	170	124	294
173. Եղակեր	28	141	123	264
174. Էրքեջ	170	430	343	773
175. Հաղթութ	52	143	132	275
Գյուլիստանի գավառ				
176. Մանասբեկ	80			670
177. Հաբրիքենդ	25			263
178. Գետաշեն	700			5361
179. Ազատ	110			718
180. Աբլաղ	60			324
181. Նորաշեն	40			243
182. Բախշիկ	170			1423
183. Ղարադաղլու	80			495
184. Խանլար	40			273
185. Սարով	30			210
186. Ոսկանապատ	102			1215
187. Միզիկ	75			416
188. Մուրուտ	34			315
189. Բարաջուր	56			387
190. Վերին Բարիատ	84			714

191. Ներքին Բարիատ	400	2586
192. Բանանց	119	1013
193. Խաչակապ	45	277
194. Բարանց	627	5838
195. Զագլիկ	99	1227
196. Ջոփդար	185	2258
197. Բարսուն	102	1500
198. Բարուն		325
199. Ղուլանբիր	102	1007
200. Նուվենր	140	1350
201. Զահիր	331	12411
202. Զարդախլու	400	2518
203. Բաղաբենդ	60	320
204 Ղազախ		

Ըստ վերոնշյալ փաստաթղթի՝ Ղարաբաղի լեռնային մասի բնակչությունը կազմել է մոտ 240 հազար մարդ: Ընդ որում, հայերը մեծամասնություն են կազմել Ելիզավետպոլի, Զևանշիրի, Շուշու, Կարյագինոյի շրջաններում, ուր նրանց թիվը 194 հազար էր:

Ղազախի բնակչությունը 72.000 մարդ էր, որից 61.000 հայեր, 9.000 մահմեդականներ և 2.000 այլ ազգերի ներկայացուցիչներ: Ինչ վերաբերվում է Զանգեզուրին, որը Ղարաբաղի աշխարհագրական շարունակությունն է, ապա այստեղ հայերը նույն վերոհիշյալ փաստաթղթի համաձայն 100 հազար էին, մահմեդականները՝ 50 հազար, այսինքն՝ երկու անգամ ավելին քան մահմեդական բնակչությունը:

Ընդհանուր առմամբ, բուն Արցախ-Ղարաբաղում (Ղազախի, Ելիզավետպոլի, Շուշու, Զևանշիրի, Կարյագինոյի շրջաններ) բնակվել են 255.000 հայեր:

Ահա այս շրջանների հայ բնակչության տեղահանման և վերացման քաղաքականությունն էին որդեգրել Ադրբեջանի Հանրապետությունն ու Թուրքիան: 1918թ. ընթացքում Արցախի հայ բնակչության նկատմամբ ցեղասպանության քաղաքականություն փորձեց իրականացնել թուրքական զորահրամանատարությունը: Կոտորածներ կազմակերպվեցին մասնավորապես Ելիզավետպոլ նահանգի հայ բնակչության շրջանում: Դա փաստվում է նաև Սովետական Ադրբեջանի ներքին գործերի ժողկոմին հղված լիազոր Մոլլա Մամեդ Օղլու զեկույցով, ուր նշված է .«Նուխու և Արեշի գավառների ողջ հայ բնակչությունը ամբողջովին ոչնչացվել է, մեծ մասը մորթոտվել են, գյուղերը այրվել»[10]:

Էլ ավելի ողբերգական ճակատագիր ունեցավ Շուշին: 1920 թ. մարտի 10 - 23-ը ադրբեջանական ցեղասպանները ոչնչացրեցին հայկական թաղամասը, սրատեցին, բռնաբարեցին, թուրքացրեցին ողջ հայ բնակչությանը: Այդ մասին Հայոց կաթողիկոսին ուղարկված Շուշու կոնսիստորիայի անդամ Կարապետ Քահանա Վարդապետյանցի և ատենադպիր Միրզա Տեր-Սարգսյանի զեկույցում

մասնավորապես նշվում է. «12-13 հազար հայության 6 հազարը փախան գյուղերը, 4 հազար հոգին՝ մեծ մասը տղամարդ, սրի քաշվեցան, գնդակահարվեցան ու հրկիզվեցան և մոտ 3 հազար հոգի մնացին քաղաքում, գների թուրքերի ձեռքին, որոնց մի մասը 400 հոգի երիտասարդ ուժեր տներում և բանտերում սրածվեցան, 700 հոգի կին ու երեխա, ծեր ու պառավ արձակվեցան և հասան գյուղերը, իսկ մնացածը, սիրուն կանանց ու աղջիկներանց հետ գտնվում են թուրքերի տներում, նահանգապետ Սուլթանովի մոտ և բանտերում: Մոտ 100 գեղեցկուհիներից կազմված 4 առանձին կանանոց, որտեղից բաժին են հանվում սպաներին և ասկյարներին»[11]:

Շուշիի դեպքերից հետո եթե Ադրբեջանին հաջողվեր մտնել Նախիջևանի և Շարուրի շրջանները, ապա նա կտիրանար նաև Զանգեզուրին և Ղարաբաղի ու Զանգեզուրի միջոցով անմիջականորեն կկապվեր Թուրքիայի հետ՝ օգակելով հայկական տարածքները: Մի հանգամանք, որ շատ լավ գիտակցում էր Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը[12]:

Բայց Արցախի և Զանգեզուրի հայ բնակչության հերոսական պայքարը անառիկ ու հայկական պահեց երկրամասերը՝ ի չիք դարձնելով արյունարբու թշնամու բոլոր հաշիվները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղևոնդ Ալիշան; Արցախ; ԵՊՀ հրատ., Երևան, 1993, էջ 6:
2. Кавказский Календарь на 1 января 1916г; Тифлис; 1917.
3. Armenia: Political and Ethnic Boundaries 1878-1948; London: 1998; page 453.
4. նույն տեղում; էջ 489:
5. նույն տեղում; էջ 477:
6. նույն տեղում; էջ 479; Кавказский Календарь ; на 1916; Тифлис; 1917; ст. 194-195:
7. Հ.Մ. Հարությունյան, Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ.; ՀՀ ԳԱԱ, Երևան, 1996, էջ 33 /տողատակ/, ՀԱԱ, ֆ.199, ց. 1,գ.128, թ.249:

Armenia: Political & Ethnic Boundaries; 1878 –1948; page 577/1912թ. Էջմիածնի կաթողիկոսական տվյալներ/, ՀԱԱ; ֆ. 314; ց.1; գ. 34; թ.21; Աբրահամ Իսայի Կիսիբեկյան; "Հուշեր, մաս հինգերորդ, Ղարաբաղ-Բաքու, 1945-1947:

8. Վահրամ Բալայան; Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը; Երևան; 2002; էջ 293:
9. ՀԱԱ; ֆ.150; ց.1; գ. 59; թ. 1-8:
10. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ ./Քաղաքական պատմ. փաստաթղթերի և նյութերի ժողովածու; ՀՀ ԱԱ Պատմության Ինստիտուտ, ՀՀ կառավարությանը առընթեր արխիվային գործի վարչություն; ՀՀ ԱԱ «Գիտություն» հրատարակչություն; Երևան; 2000; էջ 471:
11. նույն տեղում, էջ 470
12. ՀԱԱ; Ֆոնդ 200; ց1; գ. 355 /մաս I/ ; թ. 3